# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2014 թվականի N 191 - Ա

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

---

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության գյուղական բնակավայրերում գործող առողջապահական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված առաջարկությունների մշակման նպատակով՝

1. Ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարին՝ միջգերատեսչական աշխատանքային խմբի աշխատանքներին աջակցելու նպատակով, ըստ անհրաժեշտության, ներգրավել նաև Հայաստանի Հանրապետության մարզպետարանների ներկայացուցիչներին:

3. Միջգերատեսչական աշխատանքային խմբին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ուսումնասիրել գյուղական բնակավայրերում գործող առողջապահական կազմակերպությունները բաժնետիրական ընկերություններից պետական կամ

համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպելու հետ կապված հարցերը և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել այդ գործընթացների իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2014 թ. մարտի 17
Երևան